«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «ՏՀՏ-ի կիրառումը անգլերենի դասավանդման ընթացքում»

ՀԵՂԻՆԱԿ՝ Լուսինե Թովմասյան Արծրունի

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/՝ 2-րդ խումբ, «Անգլերեն լեզու»

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

Գլուխ 1 «ՏՀՏ-ի կիրառումը անգլերենի դասավանդման ընթացքում»

1.1 ՏՀՏ գործիքների կիրառման դերն ու նշանակությունն անգլերենի դասավանդման գործընթացում.....5

1.2 Դասավանդման մեր փորձից.....13

Եզրակացություններ.....16

Օգտագործված գրականության ցանկ.....17

Հավելվածներ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Իմ հետազոտական աշխատանքի թեման է <<ՏՀՏ-ի կիրառումը անգլերենի դասավանդման ընթացքում>>: Այն բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկ բաժնից: Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Այժմ շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: Հասարակության զարգացման ընթացիկ ժամանակահատվածը բնութագրվում է դրա վրա, ուժեղ ազդեցությամբ համակարգչային տեխնոլոգիաների վրա, որոնք ներթափանցում են մարդու գործունեության բոլոր ոլորտները, ապահովում են հասարակության մեջ տեղեկատվության հոսքերի տարածումը՝ ձևավորելով համաշխարհային տեղեկատվական տարածություն: Այս գործընթացների անբաժանելի եւ կարեւոր մասը կրթության համակարգն է:

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելն է, ով կկարողանա արագ կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրների կրթության ոլորտի ներկայացուցիչները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիանրի կիրառության, այսօր գրեթե անհնար է հասնել կրթական նոր մարտահրավերներով պայմանավորված բարեփոխումներին: ՀՀ բոլոր դպրոցներն ունեն համակարգչային դասասենյակներ և համացանցին միանալու հնարավորություն, ներդրվել է էլեկտրոնային գնահատման համակարգ: Այդուհանդերձ, փաստ է, որ ուսուցիչների մեծ մասը չի գիտակցում ՏՀՏ կիրառության անհրաժեշտությունը կամ չի ուզում հրաժարվել դասի պլանավորման ավանդական եղանակներից: Շատերը համակարգչային հմտությունները զարգացնելը,

էկելտրոնային նյութեր ստեղծելը, կիրառելն ու տեղայնացնելը համարում են լրացուցիչ աշխատանք: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կան բազմաթիվ ուսուցիչներ, ովքեր գնահատում են նորարարությունները, սիրով գնում դրանց ընդառաջ:

Կարծում ենք, որ ուսուցիչը պիտի հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները, զգա, թե որքանով է այն հեշտացնում թե' իր՝ ուսուցչի գործը, թե' սովորողների՝ առարկան հասկանալու, թեմաներն ընկալելու խնդիրը: Բացի դա՝ անհրաժեշտ են համապատասպան պաշարներ ու դրանք կիրառելու հմտություններ: Տեխնոլոգիաների կիրառումը մեծապես աջակցում է նաև անգլերեն լեզվի դասավանդմանը: Այս տեխնոլոգիաները նպաստում են սովորողների տրամաբանական ու ստեղծագործական մտածողության զարգացմանը, խթանում են ինքնուրույնությունը, ձևավորում թվային և մեդիա կարողունակությունը: Ուստի կարևոր ենք համարում այդ թվում և անգլերենի դասի ընթացքում ՏՀՏ գործիքների կիրառումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պայմանավորված կրթական ոլորտում իրականացվող բարեփոխումներով՝ օրապահանջ է դասին ՏՀՏ գործիքների շարունակական կիրառումը: Հենց այս կարևորագույն հանգամանքով էլ պայմանավորել են սույն ուսումնասիրության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել անգլերեն լեզվի դասավանդման շրջանակներում ՏՀՏ գործիքների կիրառության արդյունավետությունն ու դրանց ազդեցությունը սովորողների առաջադիմության, համակողմանի զարգացման վրա:

Հետազոտության խնդիրը: Կարևորել անգլերենի դասընթացի շրջանակենրում ՏՀՏ գործիքների կիրառման անհրաժեշտությունը, ցույց տալ դրանց զարգացնող ու մոտիվացնող նշանակությունը:

Գլուխ 1 «ՏՀՏ-ի կիրառումը անգլերենի դասավանդման ընթացքում»

1.1 ՏՀՏ գործիքների կիրառման դերն ու նշանակությունն անգլերենի դասավանդման գործընթացում

Կրթության մեջ ՏՀՏ կիրառության կարևորումը հատկապես վերջին տարիներին օրախնդիր է, կրթության արդիականացման բաղադրիչ: Պետությունն ամեն կերպ խրախուսում է այն ուսուցիչներին, ովքեր սովորում միմյանցից, գործընկերների հետ քննարկում ՏՀՏ օգտագործման փորձը, ինքնակրթվում են, ուսումնասիրում ու ներկայացնում միջազգային փորձը: «Անգլերեն» և «Ինֆորմատիկա» ուսումնական առարկաների կապն ակնհայտ է, ուստի ՏՀՏ բաղադրիչով անգլերենի դասերի անցկացումն անչափ կարևոր է: Այսօրվա ուսուցչի գերխնդիրն է դասը պլանավորել այնպես, որ սովորողների հետաքրքրությունը դասի ընթացքում չկորչի, սովորողի ակտիվությունը պահպանվի ամբողջ դասի ընթացքում: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է դասի պլանավորման ընթացքում ներառել այնպիսի արդյունավետ ուսումնական մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնք կակտիվացնեն դպրոցականներին, կխթանեն նրանց ինքնուրույն աշխատանքը, կզարգացնեն քննադատական մտածողությունն ու նախաձեռնությունը:

Մեր մանկավարժական փորձին հղում անելով՝ կարող ենք փաստել, որ անգլերենի նկատմամբ հետաքրքրությունը սովորողների մեծամասնության մոտ կախված է նրանից, թե ինչ արդյունավետ մեթոդներով է ընթանում ուսուցման գործընթացը: Անհրաժեշտ է մտածել բոլոր սովորողների ներգրավածությունը ապահովելու մասին և օգտագործել այն որպես մեկնարկային կետ հետաքրքրության առաջացման և զարգացման համար, խորացնել ճանաչողական հետաքրքրություններն ու լեզվական կարողությունները: Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի ձևավորումը կրթական համակարգի գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումն այդ թվում և լեզուների դասավանդման ընթացքում նույնպես դիտարկվում է որպես կրթության կարևոր խնդիր: Սովորողների ճանաչողական հետաքրքրությունները կարևոր հանգամանք են հանդիսանում ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու տեսանկյունից: Հայտնի է, որ լեզուների ուսուցումը նպաստում է սովորողների ընդհանուր

կրթությանը, նրանց ճանաչողական, լեզվական, հաղորդակցական կարողությունների զարգացմանը, տրամաբանության խթանմանը, ուստի որքան հետաքրքիր ու ակտիվ է ուսուցիչը պլանավորել դասը, այդքան դրական ու արդյունավետ է դասից ակնկալվող արդյունքը: Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը, ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ[1]:

Այսօր ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ավելի հեշտ են տրվում սովորողներին, դրանք կազմում են նրանց առօրյայի բաղկացուցիչ մասը, ուստի սովորողներին առարկան սիրել տալու համար անչափկարևոր է տեխնոլոգիական կիրառության ապահովումը դասին: Որպեսզի սովորողները լավ տիրապետեն լեզվին, կարողանան առանց վախերի և կոմպլեքսների հաղորդակցվել, անհրաժեշտ է շատ լրջորեն վերաբերել յուրաքանչյուր թեմայի ուսուցմանը, սովորողների գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, ընդհանրացմանը և գնահատմանը:

Ժամանակակից աշխարհը թևակոխել է տեղեկատվական հասարակության զարգացման որակապես նոր փուլ: Տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը կյանքի բոլոր բնագավառներ հանգեցրել է հասարակության կյանքի որակի արմատական փոփոխությունների: Համակարգչայնացումը դարձել է մեր հասարակության անբաժան մասը՝ իր հետ բերելով նաև մի շարք բացասական երևույթներ: Վերջինը հատկապես վերաբերում է համակարգչային կախվածությանը: Ակնհայտ է, որ այսօր սովորողներից շատերի մոտ մարել է հետաքրքրությունը ուսման նկատմամբ, նրանցից շատերի համար դպրոց գնալն ու դաս սովորելը դարձել է անհետաքրքիր: Այստեղ թիրախային են հատկապես դպրոցականները, որոնց մոտ ևս շատ հաճախ է հանդիպում այս ախտանիշը,

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 3, 4:

ինչը, կարծում ենք, կործանարար է: Այս երևույթը, աստիճանաբար ձևավորվելով, կարող է դառնալ վիրտուալ հիվանդություն, ինչը դպրոցականների դեպքում առավել բարդ է վերահսկել ու կանխել:

Այս ամենը կանխելու և տեխնոլոգիական հնարավորություններն ի շահ դպրոցականների օգտագործելու համար, կարծում ենք, որ դասի ընթացքը պետք է լինի ակտիվ, աշակերտակենտրոն, հագեցած նոր տեխնոլոգիաներով, որպեսզի սովորողն այստեղ գտնի իր հետաքրքրություններն ու բավարարի շփվելու, խոսելու արտահայտվելու իր պահանջմունքը: Այս պարագայում սովորողների հետաքրքրությունների ուսումնասիրությունը, ժամանակին ստեղծված հետադարձ կապը թույլ կտա հստակեցնել սովորողի համար գերակա արժեքներն ու կողմնորոշել դրանք դեպի բնականոն զարգացում: Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար՝ սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ, որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար[2]:

Այսպիսով, կարծում ենք, որ դպրոցականներին այդուհանդերձ հնարավոր է զերծ պահել համակարգչային ազդեցության բացասական կողմից: Այս ուղղությամբ իր ուրույն դերակատարումն ունեն դպրոցն ու ընտանիքը: Հարկավոր է վերահսկել սովորողի ամեն մի ազատ րոպեն, թույլ չտալ, որ ժամանակը անտեղի ծախսի: Իհարկե, կարելի է և' խաղալ, և' ժամանակ անցկացնել սոցիալական ցանցերում, սակայն այստեղ ամենակարևոր բաղադրիչը վերահսկողությունն է: Իր հերթին էլ ուսուցիչը շատ անելիք ունի այն առումով, որպեսզի կարողանա սովորողին բերել այն գիտակցմանը, որ համացանցը սոսկ զվարճությունների հարթակ չէ, այլ դրա արդյունավետ օգտագործումը կարող է ձևավորել բարձր արժեքներ ու կայուն գիտելիքներ:

2 https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

Ուսուցիչը, պայմանավորված տեղեկատվական հոսքի ակտիվությամբ, ունի նաև այլ տեսակի առաքելություն: Պետք է անպայման սովորողին փորձել զերծ պահել վտանգավոր ու կործանիչ համացանցային հարթակներից՝ շատ դեպքերում ուղիղ ցույց տալով դրանց վնասակար ազդեցությունները մարդու կյանքի, անվտանգության վրա: Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի կիբեռհետապնդման դեպքում՝ ապաակտիվացնել և փակել տվյալ սպառնացող աղբյուրի հետ հաղորդակցման աղբյուրը[2]:

ՏՀՏ-ի մուտքը կրթական ոլորտ քիչ-քիչ փոխեց ավանդական պատկերացումները կրթության ու զարգացման մասին: Կարող ենք ասել, որ կրթության ոլորտում այդ միջոցների օգտագործումը կարող է շատ լավ արդյունքներ ունենալ: Շատ գործիքներ կան, որոնք դյուրացնում և արագացնում են ուսումնառության գործընթացը՝ հեշտացնելով ուսուցչի աշխատանքն ու ապահովելով դասի պատկերավոր ու նկարագրական լինելը: Այս տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական պրոցեսում ևս պիտի հաշվարկված լինի: Ուսուցիչը պետք է գնահատի դրա արդյունավետությունն ու ապա նոր միայն կիրառի գործիքը: Մի բան պարզ է, այս ամենը հետաքրքիր է մերօրյա սովորողներին, քանի որ դասի մեջ կա դինամիկա: Ավելի արդյունավետ է ՏՀՏ գործիքների համադրումը փոխգործուն մեթոդների հետ: Այս պարագայում սովորողը ամբողջապես իր ափսեի մեջ է:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Կրթության արդիականացման ռազմավարությունը շեշտում է բոլոր մակարդակներում ուսուցման մեթոդներն ու տեխնոլոգիաները փոխելու
անհրաժեշտությունը: Սովորողին հնարավորություն է տրվում տեղեկատվություն հավաքել, վերլուծել, հետազոտել, կատարել տնային առաջադրանքներ գրաֆիկական պատկերի,

[2] https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

տեսասահիկի կամ ճանաչողական հոլովակի տեսքով: Սա զարգացնում է սովորողի ինքնուրույնությունը, ստեղծագործականությունն ու ինքնաճանաչողականությունը: Սովորողը այս տեխնոլոգիաների շնորհիվ հնարավորություն է ստանում գրքային գիտելիքից բացի ստանալ ավելի լայն հնարավորություններ, այդ թվում՝ սեփական հմտություններն ու կարողությունները այլընտրանքային միջավայրում իրացնելու: ՏՀՏ- ի կիրառման միջոցով դպրոցականը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն: Օտար լեզվի դասավանդման ընթացքում կարևոր է հաղորդակցումը, այնուամենայնիվ հույժ կարևոր է, որ սովորողը նաև հնարավորություն ունենա լսել օտար լեզվով ուրիշի խոսքը, ինչը ամրակայում է սովորողի լեզվամտածողությունը, սովորեցնում ճիշտ արտահայտչաձևը:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում լրացուցիչ հնարավորություն է սովորողների ուսուցման որակը բարելավելու համար: Այդ տեխնոլոգիաները և կրթական առցանց հարթակները կարող են ուսուցչին օգնել ավելի արդյունավետ լուծել հետևյալ խնդիրները.

- սովորողների ինքնուրույնության խթանում, աջակցություն նրանց անհատականության զարգացմանը,
- անհրաժեշտության դեպքում հեռավար կրթության կազմակերպում,
- սովորողների կրթական կարիքների առավելագույն բավարարում,
- գիտելիքի անկախ ձեռքբերման և փոխանցման գործընթացի արդյունավետության բարձրացում,
- սովորողների ՏՀՏ կարողությունների ձևավորում,
- ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի օգտագործման տեխնոլոգիաների կատարելագործում,
- սովորողների պատկերավոր մտածողության զարգացում,
- մեդիագրագիտություն, համացանցից օգտվելու կանոնների յուրացում:

Անգլերեն լեզվի ուսուցման նպատակներն են՝

- Հաղորդակցական կարողությունների զարգացում:
- Ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության, սովորույթների, ավանդույթների իմացություն:
- Սովորողների մոտ սեփական երկրի և այլ ազգերի մշակույթների հանդեպ հարգանքի ձևավորում:
- Ինքնակրթությամբ զբաղվելու կարողության ձևավորում:

Անգլերեն լեզվի ուսուցման խնդիրներն են՝

- Զարգացնել սովորողների լեզվական խոսքային, հանրամշակութային, գործաբանական, փոխհատուցման, ուսումնաճանաչողական կարողությունները:
- Բարձրացնել դպրոցից դուրս սովորողի շփման վստահությունը:
- Հարստացնել սովորողի օտարալեզվյան բառապաշարը:
- Ձևավորել ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունները:
- Զարգացնել ընթերցած նյութը վերլուծելու կարողությունը:
- Զարգացնել սովորողների բանավոր խոսքը՝ կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով:
- Զարգացնել ընդհանուր խոսքային՝ խոսելու և լսելով հասկանալու, ինչպես նաև միջնորդավորված հաղորդակցման՝ ընթերցանության միջոցով օտար լեզվով նյութը հասկանալու և գրավոր խոսքին տիրապետելու հմտությունները[3]:

Հաշվի առնելով օտար լեզվի ուսուցման ժամանակ սովորողների հնարավոր դժվարությունները՝ կարող ենք պնդել, որ ՏՀՏ-ի կիրառումը կրթական գործընթացում կարող է նպաստել տեսական մտածողության զարգացմանը, և բարելավել կրթական գործընթացի արդյունավետությունն ու լրացուցիչ խթան հանդիսանալ սովորողների

[3] file:///C:/Users/nice/Downloads/3otarlezu_(1)%20(1).pdf «Հանրակրթական միջին դպրոցի երրորդ օտար լեզվի առարկայական չափորոշիչ»

սովորելու մոտիվացիայի բարձրացման համար: Միևնույն ժամանակ սովորողը պետք է անպայման վերահսկվի այս հարթակում գործունեություն ծավալելիս: Մեծերի գերխնդիրն է ապահովել այնպիսի բարոյահոգեբանական միջավայր, որպեսզի սովորողն անկաշկանդ կիսվի իր հետաքրքրություններով, չգնա ծածուկ քայլերի, որոնք կարող են անդառնալի հետևանքներ առաջացնել:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում

- Ուժեղացնում է սովորողների սովորելու մոտիվացիան:
- Հնարավորություն է տալիս օգտագործել ինֆորմացիա ուսումնական զանազան հարթակներից:
- Խնայում է ժամանակը:
- Հնարավորություն է տալիս դասի ընթացքը դարձնել ավելի հետաքրքիր ու բազմաբաղադրիչ:
- Ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահուստ:

Անգլերենի դասավանդման շրջանակներում ՏՀՏ- ի կիրառումը սովորողներին թույլ կտա ինքնուրույն ստեղծել օրվա դասի թեմային վերաբերող ցուցադրական նյութեր, տեսասահիկներ, տեքստային հետազոտություններ, ինչը կօգնի նրանց ավելի պատկերավոր ու առարկայական յուրացնել տվյալ թեման, համակարգել ստացած գիտելիքները: Սովորողների համար միշտ էլ աշխատանքը համակարգչի հետ շատ հետաքրքիր է: Այսօր գոյություն ունեն բազմաթիվ կրթական կայքեր, ֆորումներ, հավելվածներ և ծրագրեր, որոնք հենց այդ նպատակին են ծառայում: Տարեցտարի ավելանում են դիդակտիկ նյութերը, որոնք ստեղծվել են ՏՀՏ գործիքների օգնությամբ: Ներկայումս կան բազմաթիվ համակարգչային ծրագրեր և օնլայն գործիքներ, որոնք օգտագործելով, անգլերենի ուսուցումը ավելի հանրամատչելի և հետաքրքիր է դառնում: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերը ոչ միայն ընդլայնում և համախմբում են ձեռք բերված գիտելիքները, այլև զգալիորեն բարձրացնում են աշակերտների ստեղծագործական և մտավոր ներուժը: Քանի որ նրանց մեջ ապացուցելու երևակայությունն ու ցանկությունը մեծ է, արժե սովորեցնել հնարավորինս հաճախ արտահայտել սեփական մտքերը, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ:

Անգլերենի դասին ՏՀՏ գործիքների կիրառումը կարող է լուծել մի շարք ուսումնական խնդիրներ, օրինակ՝

1. *Զարգացնել խոսքը:* Սովորողները օտար լեզվով հարցազրույցներ են վերցնում սովորողներից և ուսուցիչներից:
2. *Զարգացնել գրելու հմտությունները:* Սովորողները իրենց թարգմանություններն ու ստեղծագործությունները տեղադրում են իրենց բլոգներում:
3. Ընդլայնել բառապաշարը՝ ավելացնելով տարբեր դարձվածաբանական արտահայտություններ, ասացվացքներ և այլն:
4. Զարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները:
5. Զարգացնել սովորողի՝ իր գիտելիքներն ու հմտությունները կիրառելու կարողությունը:
6. Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ /մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն/ թարգմանությունների միջոցով:

Որպեսզի դասը ունենա դրական ու կառուցողական վերջնարդյունք, անհրաժեշտ է, որ ուսուցիչն ու սովորողը լինեն երկու համագործակցող սուբյեկտներ: Միայն դասավանդողի հետևողականության և սովորողի ջանասիրության դեպքում են լավագույն արդյունքներ գրանցվում: Անշուշտ, չի կարելի հերքել դարերով եկած այն կարծրատիպը, որ նոր լեզու սովորող յուրաքանչյուր անձ բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման անհատական մոտեցում է պահանջում, ուստի չի կարող մեկ անձի դեպքում հաջողություն արձանագրած մարտավարությունը համարվել բացարձակ արդյունավետ: Բացի այդ, կարևորվում են նաև լեզվական ուսուցման նպատակը, ժամկետները, սովորողի ընդունակությունները և այլն: Սա է պատճառը, որ մանկավարժության մեջ ուսուցման մարտավարությունները բազմաթիվ են, իսկ արդյունավետ դասավանդման մեթոդները մի քանիսը[5]: Վստահ ենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կարող է փոխակերպել ավանդական դպրոցական առարկաների ուսուցումը՝ հիմնավորելով երեխաների աշխատանքը, օպտիմալացնելով ուսումնական նյութի ընկալման և մտապահելու գործընթացները և որ ամենակարևորն է՝ սովորելու նկատմամբ երեխաների հետաքրքրությունը բարձրացնելով անընդհատ ավելի բարձր մակարդակի:

Մի բան ակնհայտ է՝ ժամանակակից դպրոցի ուսուցիչը ամենն գնով պետք է փորձի համապատասխանել կրթական նոր պահանջներին՝ նորարարություններով ոգևորելով նաև սովորողներին:

5 http://publications.ysu.am/wp-content/uploads/2019/05/19_N_MANUKYAN.pdf Ն. Մանուկյան, «Անգլերենի դասավանդման որոշ մեթոդների շուրջ»:

1.2 Դասավանդման մեր փորձից

Ուսուցչի աշխատանքը երբեք էլ հեշտ չի համարվել: Ժամանակակից փոփոխվող աշխարհում ուսուցիչը պետք է քայլի ժամանակին համընթաց, անընդհատ կատարելագործվի և ուսուցման նոր ուղիներ գտնի: Հայտնի է, որ օտար լեզուների ուսուցումը բավականին ժամանակատար ու դժվար գործընթաց է, ուստի ուսուցչի հիմնական խնդիրներից մեկն առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացումն է, սովորողների մոտ ստեղծագործական և ինտելեկտուալ ուժեր արթնացնելու ցանկությունը: Անգլերենի իմացությունը ժամանակակից աշխարհում պատուհան է դեպի մեծ աշխարհ: Իմանալով միջազգային հաղորդակցության այս լեզուն՝ սովորողը, ով ապագայում պետք է ընտրի մասնագիտություն, նոր հնարավորություններ, աշխարհը բացահայտելու մեծ գործիք է ունենալու իր գիտելիքների բանկում:

Այսպիսով, հղում անելով մեր մանկավարժական փորձին՝ վստահաբար կարող ենք պնդել, որ անգլերենի դասավանդման գործում հաջողության հասնելու համար պետք է նախադրյալներ ստեղծել, որպեսզի սովորողն ունենա հետևյալ հարցի պատասխանը՝ «Ինչու՞ է ինձ պետք սովորել անգլերեն» հարցը: Սովորողները պետք է տեսնեն իրենց աշխատանքի արդյունքները, կիրառեն իրենց գիտելիքները գործնականում: Իսկ ՏՀՏ գործիքների կիրառումը դասին լայն հնարավորություններ է ստեղծում այս առումով:

Մի բան հստակ է՝ նոր տեխնոլոգիաների մուտքը կրթական համակարգ փոխել է սովորողի կողմից նյութը պարզապես պատճենելու, մեխանիկորեն վերարտադրելու, անգիր անելու անհրաժեշտությունը՝ դրանով իսկ դինամիկա հաղորդելով սովորողի անհատականության զարգացմանը:

Դիտարկենք «անգլերեն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում ՏՀՏ գործիքների կիրառումը սովորողների կողմից.

Դասարան՝ 7-րդ

Թեմա՝ «Travelling»

Միջառարկայական կապեր՝ «Աշխարհագրություն» «Ինֆորմատիկա»

Աշխատանքի նպատակը՝

- Ծանոթացնել սովորողներին անգլախոս երկրների մշակույթին, տեսարժան վայրերին, հետաքրքիր սովորույթներին:
- Զարգացնել սովորողների աշխարհաճանաչողությունը:
- Նպաստել ՏՀՏ գործիքների կիրառման հմտությունների ձևավորմանը:
- Ձևավորել անգլերենով հաղորդակցական հմտությունները:
- Հարստացնել բառապաշարը:
- Խթանել սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Ուսուցիչը նախօրոք դասարանը բաժանեց երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրն աշխատեց որոշակի առաջադրանքի վրա:

ԽՈՒՄԲ 1

Առաջին խմբում ընդգրկված են թվով 6 սովորող, ովքեր, օգտվելով համացանցային տեղեկատվական հարթակներից, հավաքեցին տեղեկություններ, ապա Word տեքստային խմբագրիչի օգնությամբ կատարեցին իրենց աշխատանքը: Սովորողները տեղեկություններ հավաքեցին անգլերեն լեզվի, դրա կիրառման, անգլերենով խոսող երկրների և ժողովուրդների, նրանց ավանդույթների և սովորույթների մասին:

ԽՈՒՄԲ 2

Այս խմբում ընդգրկված էր 7 սովորող: Խումբը պատրաստեց ճանաչողական տեսասահիկ և հոլովակ: Սովորողները տեսասահիկը պատրաստեցին Microsoft Office PowerPoint ծրագրի միջոցով: Այստեղ զետեղված էին հետաքրքիր տեսարժան վայրերի մասին տեղեկություններ և նկարներ, որոնք վերաբերվում են անգլախոս երկրներին, անգլերենը որպես

պաշտոնական լեզու համարող միջազգային կազմակերպություններին: Իսկ ահա տեսահոլովակի մեջ սովորողները ներառել էին նախօրոք իրականացրած հարցազրույցներ, ճանապարհորդությունների, անգլերենի միջազգային լեզու համարվելու, այն իմանալու մասին:

Այսպիսով, սովորողները ներկայացին իրենց աշխատանքները, քննարկեցին ուսուցչի հետ, խոսեցին իրենց դժվարությունների և հաջողությունների մասին: ՏՀՏ գործիքների կիրառմամբ սովորողները վերջում ունեցան հետևյալ վերջնարդյունքները՝

- Սովորողները ծանոթացան անգլախոս երկրների մշակույթներին:
- Բավարարեցին սեփական հետաքրքրությունները, ընդլայնվեց նրանց բառապաշարը, խորացան նրանց գիտելիքները աշխարհագրությունից:
- Սովորողները հմտացան ՏՀՏ գործիքների կիրառման մեջ:
- Զարգացան նրանց թիմում համատեղ աշխատանքի հմտությունները, ձևավորվեց դասընկերների կարծիքների նկատմամբ հանդուրժողականությունը, երկխոսություն վարելու, փոխզիջումներ փնտրելու և գտնելու կարողությունը:
- Զարգացավ սովորողների ինքնուրույնության և ինքնակազմակերպվելու կարողությունը:

Կարծում ենք, որ ՏՀՏի կիրառումն անգլերենի դասավանդման ընթացքում օրապահանջ է, և մեծապես կարող է նպաստել սովորողների առաջադիմությանը, առարկաների ինտեգրված ուսուցմանը, լեզվական կարողունակության զարգացմանը: Այս նկատառումներից ելնելով՝ մեր դասը պլանավորելիս հաճախակի ենք դիմում ՏՀՏ գործիքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքում կատարեցինք հետևյալ եզրահանգումները՝

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից:
- Ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ օգտագործի համակարգիչն ու համացանցը:
- Պետք է սովորողին պաշտպանել կիբեռհարձակումից:
- Հարկավոր է դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավերել, ցույց տալ համակարգչի կրթող ու զարգացնող գործառույթը:
- Անգլերենի դասին ՏՀՏ գործիքների կիրառությամբ դասերն օգնում են սովորողների լեզվամտածողության, խոսքային կարողության զարգացմանը:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ:
- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է գիտակցի տեխնոլոգիական հնարավորությունների անհրաժեշտությունը:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք;
- Անգլերենի դասին սովորողի համար պետք է ստողծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման, երկխոսության համար:
- Ուսուցիչը պետք է ամեն կերպ փորձի համակարչային կախվածությունից զերծ պահի սովորողին՝ մշտադիտարկումներ իրականացնելով:

Կցանկանայինք ավելացնել, նաև, որ սույն աշխատանքը մեծ չափով կօգնի մեզ մեր մանկավարժական հետագա գործունեության ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:
3. file:///C:/Users/nice/Downloads/3otarlezu_(1)%20(1).pdf «Հանրակրթական միջին դպրոցի երրորդ օտար լեզվի առարկայական չափորոշիչ»:
4. http://publications.ysu.am/wp-content/uploads/2019/05/19_N_MANUKYAN.pdf Ն. Մանուկյան, «Անգլերենի դասավանդման որոշ մեթոդների շուրջ»:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Տեսադաս՝ **Learn English - Travel Vocabulary**

https://youtu.be/A-63Yawo0zI